ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ

ԿԱՏԵՐԻՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ*

ՀՏԴ 352/354

Կատերինա Ալթունյան
Երևանի պետական համալսարան, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ,
Հանրային կառավարման ամբիոնի դոցենտ,
քաղաքական գիտությունների թեկնածու
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
katya.altunyan@ysu.am

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել հանրային (պետական) կառավարման արդի փուլում հենակետային ***հայեցակարգերի էությունը, դրանց ձևավորման նախադրյալներն ու զարգացումների գերագույն խնդիրները: Վերջինը ենթադրում է մասնավորապես ժամանակակից «հանրային կառավարման» (public administration), «հանրային մենեջմենթի» (public management) ու «հանրային ղեկավարման» (public governance) գաղափարաբանությամբ կառուցված տեսական համակարգերի ուսումնասիրություն: Հանրային կառավարման համակարգի ինստիտուցիոնալ կայացման անհրաժեշտությունը կարևորելով՝ փորձ է արվել համակողմանիորեն վերլուծել առաջանցիկ հասարակական, քաղաքական և տնտեսական համակարգերում կառավարչական մտքի արդիականացման առանցքը:***

Ինչպես գիտենք, հանրային կառավարումը ժողովրդավարական համակարգի ռեժիմ է, որը, համապարփակ սահմանման համաձայն, քաղաքականության մշակման, իրականացման հանրորեն ընդունելի կանոնների ամբողջություն է: Եվ ուրեմն, խնդրո առարկան հետազոտելու համար օգտագործվել են մասնագիտական աղբյուրների ուսումնասիրության համեմատական մեթոդը և գործիքակազմը: Տեսությունների վերլուծության հիման վրա մշակվել ու մեկ հիմքով ներկայացվել են արդի հանրային կառավարման սկզբունքները, որոնցով այն իրականացվում է, ինչպես նաև ինստիտուտներն ու դրանց գործառնության տրամաբանությունը:

Ուսումնասիրության արդյունքում հիմնավորվում է այն միտքը, որ հանրային կառավարման կայացած համակարգ ունեցող պետություններն անցել են բոլոր երեք հայեցակարգային շրջափուլերը: Զարգացման կամ արդիականացման ընկալումը դրանցում ունի հայեցակարգային ձևակերպում, որտեղ հստակ նախանշված են հանրային ինստիտուտների կառավարման նպատակները, խնդիրներն և ակնկալվող արդյունքները:

---

* Հոդվածն ընդունվել է 26.07.2022:
Տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր, ք.գ.դ., Գարիկ Քեռյանը: 3.08.2022:
Հոդվածն տպագրության է ընդունվել 16.08.2022:

Բանալի բառեր՝հանրային (պետական) կառավարում, կառավարման տեսություն, հանրային մենեջմենթ, հանրային ղեկավարում, կառավարման սկզբունքներ, հանրային ծառայությունների մատուցում, հանրային քաղաքականություն, հանրային ինստիտուտներ, ցանցային կառավարում:

Հանրային կառավարման հայեցակարգային էվոլյուցիայի զարգացման ընթացքն ուսումնասիրելը հնարավորություն է տալիս մի կողմից ըմբռնել կառավարչական մտքի նվաճումներն առաջանցիկ պետություններում, մյուս կողմից՝ գնահատել ազգային մակարդակում բարեփոխումներ իրականացնելու ուղղություններն ու հնարավորությունները: Իբրև ինքնուրույն գիտաճյուղ, հանրային կառավարումը ձևավորվել է 1880-1950-ական թվականներին, որը համարվում է գիտաճյուղի զարգացման դասական շրջանը: Հաջորդիվ, նշմարվում են կառավարման տեսական ու գործնական հարցերը քննող նոր հայեցակարգեր, որոնց ծագումը պայմանավորել են որոշակի գործոններ:

Առաջին գործոնի մասին գրել է **Ռ.Դենհարդը**՝ կապելով այն հանրային կազմակերպությունների կառավարման ու ծառայությունների մատուցման ընդհանուր տրամաբանության փոփոխության հետ[1]: Կազմակերպական կառուցվածքների բարդացման ու նոր մոդելների մշակման հետևանքով, կառավարման գերակա խնդիրն է դառնում արագ փոփոխվող գլոբալ աշխարհի գործընթացներին համահունչ արձագանքելու կարողունակությունների ձևավորումը: Ամերիկյան գիտահետազոտական հանրույթն, առհասարակ, կարևորել է պետություն և հասարակություն հարաբերությունների վերարժևորման անհրաժեշտությունն և, այդ կերպ, ազդարարել արդի հանրային կառավարման հարացույցի գործարկման սկիզբը:

Երկրորդ գործոնը՝ դատելով կառավարչական սկզբունքների վերլուծությունից, ամենայն հավանականությամբ եղել է կառավարման դասական բյուրոկրատական համակարգից անցումը ձեռնարկատիրական (enterpreneurial) գործունեության ոճով համակարգին: Նման անցումը խրախուսվել է մասնավոր հատվածի ռեսուրսաստեղծ գործիքներ ու շահութաբեր կազմակերպական մոդելներ հանրային հատվածում գործարկելու գաղափարական տիրույթում: Վերջինը կապված է եղել մասնավոր (բիզնես) հատվածում գործառնող կազմակերպությունների պրակտիկաներով, որոնք գլոբալացվող աշխարհում ընդլայնվելով՝ հատում են ազգային պետության սահմանները և պետական համակարգի ինստիտուտների համեմատությամբ դառնում ավելի ազդեցիկ: Հետաքրքիր է խնդրով զբաղվող ամերիկացի հեղինակ **Մ. Լե Մեյի** միտքն առ այն, որ հանրային հատվածի կատարելագործման համար խրախուսվում է բիզնես կառավարման մոդելը, որն առաջիններից մեկն ԱՄՆ-ում է դառնում պաշտոնական քաղաքականության մաս[2]: Եվ վերջապես՝

Երրորդ գործոնն է՝ հանրային հատվածում ռազմավարական պլանավորման խնդիրը, որով արժևորվում է գլոբալ գործընթացներից ծագող ազդեցություններին հակազդելու քաղաքականությունների մշակման անհրաժեշտությունը: Հետկապիտալիս-

---

[1] **Denhard R**. Theories of Public Administration, “Antares” publ. house, Yerevan, 2006, pp. 10-12

[2] **LeMay M.C**. Public Administration: Clashing Values in the Administration of Public Policy, 2nd ed., “Belmont” (CA), 2006, p. 31.

տական հասարակությունում էապես վերարժևորվում է կառավարության (գերակայող բյուրոկրատական ինստիտուտի) գործառնությունն ու հանրային կառավարման այլ դերակատարների հետ փոխգործակցության ձևաչափը: Ըստ այդմ՝ հեղինակներ **Լ.Զոնսն** ու **Ֆ.Թոմփսոնը** կիրարկել են «հանրային ղեկավարում» եզրը, որի էությունն արտահայտվում է հանրային քաղաքականության մշակման, կառավարության ռազմավարական տեսլական առաջադրելու ու ցանցային կառավարման խնդիրներում[1]: Ընդհանրացնելով՝ պետք է նշել, որ վերոնշյալ գործոններից յուրաքանչյուրին համարժեք ձևակերպվել են երեք ժամանակակից հայեցակարգեր, որոնք են ժամանակակից «**հանրային կառավարումը**» (New Public Administration), «**հանրային մենեջմենթը**» (New Public Management) և «**հանրային ղեկավարումը**» (New Public Governance):

Հանրային կառավարման հայեցակարգային էվոլյուցիան տեղի է ունեցել սոցիալական կյանքի փոփոխությունների ու զարգացման նոր իրողությունների հիման վրա: «**Ժամանակակից հանրային կառավարման» հայեցակարգում** առանձնակի կարևորվել է հանրային ծառայությունների սոցիալական ուղղվածությունը: Հայեցակարգը հենվում է տնտեսության, կազմակերպությունների, ինստիտուտների ու ծրագրերի արդյունավետ գործարկման գաղափարների վրա: Պետության և հասարակության փոխհարաբերությունների նպատակամետ փոխակերպումները հանգում են մի պարզ ճշմարտության, որ կառավարման ցանկացած ձև կամ մոդել արդյունավետ է, եթե համապատասխանում է ժամանակի պահանջին: Նման մոտեցումը թույլ է տվել «ժամանակակից հանրային կառավարման» հայեցակարգի հիմնադիր-հայր **Փ.Դրաքերին** պնդելու, որ կառավարչական մտքի անցումը դասականից ժամանակակիցի եղել է կերպափոխվող հասարակության պահանջմունքներով[2]: Հեղինակը նաև չի հերքում այն իրողությունը, որ ժամանակակից կառավարման համակարգի տրամաբանության մեջ պահպանվել են դասական կառավարման հայեցակարգի բազում ինստիտուտներ ու սկզբունքներ: Վկայակոչելով ամերիկյան հանրային կառավարման համակարգը՝ Փ.Դրաքերը ընդգծել է հատկապես «անձեռնմխելի հեղինակությունների» ինստիտուտը (անգլ. համարժեքն է “boss”-ը), որն արդյունավետ գործում է ճգնաժամային կառավարման պայմաններում: Կառավարման սկզբունքների մասին խոսելիս, Փ.Դրաքերը ընդգծել է մարքեթինգային (շուկայագիտության) սկզբունքով կառավարմանն անցնելու իրողության մասին: Ըստ այդմ՝ կառավարել մարքեթինգային սկզբունքով, նշանակում է հանրային պահանջմունքների բացահայտում, բավարարում և վերարտադրություն՝ հանրային կառավարման համակարգի (գլխավորապես՝ պետության) համար շահավետ տարբերակով: Այս մոտեցումը հիմնավորվել է այլ տեսաբանների կողմից, որոնք շեշտում են, որ մարքեթինգային սկզբունքը որոշիչ է հանրային կառավարման ցանկացած կազմակերպության կողմից իրականացվող գործընթացների կազմակերպման ու համակարգման տեսանկյունից[1]:

«Ժամանակակից հանրային կառավարման» հայեցակարգում առաջ է քաշվել նաև

---

[1] **Lawrence J., Thompson F**. From Bureaucracy to Hyperarchy in Netecntric and Quick Learningn Organizations: Exploring Future Public Management Practice, Information Age Publishing, Inc., USA, 2007, p. 8-9

[2] **Drucker P. F. The Practice of Management,** “HarperBusiness”, New York, 2006, pp. 5-8.

[1] **Suvaryan Yu., Mirzoyan V., Hayrapetyan R.** Public Administration: Theory and History, “Gitutiun” publ. house, Yerevan, 2014, p. 20-23.

բազմամակարդակ կառավարման մասին թեզը: Արտաքին և ներքին միջավայրերից ստացվող ազդակներից զատ, հանրային կառավարման համակարգի վրա ազդեցության երրորդ միջավայրային մակարդակն է ձևավորվում, որպիսին **վիրտուալն** է:Ուղղակի և անուղղակի ներգործության այդ միջավայրերը բազում գործոններով ազդում են հանրային կառավարման համակարգի արդյունավետության վրա: Նշված ազդեցություններին դիմակայելու համար անհրաժեշտ է անընդհատ տեխնոլոգիական արդիականացում՝ հանրային ծառայությունների հասանելիությունն ու որակը բարելավելու և, այդ կերպ, արդյունավետ կառավարելու համար: Տեխնոլոգիական արդիականացումը գուցե մեծացնում է արտաքին աշխարհից կախվածությունները, այդուհանդերձ, նպատակաուղղված գործունեության դեպքում հանրային կառավարման համակարգի գործառնությունը դառնում է թափանցիկ ու հաշվետվողական: Վերջինը ժողովրդավարական վարչակարգերի հաստատման կարևոր պայման է, եթե ոչ առաջնայինը: Հիմք ընդունելով վերջինը, մի շարք տեսաբաններ, հանրային կառավարման ժամանակակից հայեցակարգի ձևավորման անհրաժեշտությունը պայմանավորել են նաև աշխարհում ժողովրդավարական ալիքի տարածման գաղափարական հիմքով:

Հասարակության սպառման ծավալների անընդհատ աճը և դրան զուգահեռ ընթացող հանրային ռեսուրսների նույնչափ արագ օգտագործումը աշխարհի պետություններին ստիպեց առերեսվել նոր մարտահրավերների: Արտադրության ծախսերի փոխհատուցումը, բարձրորակ հանրային ծառայություններ մատուցելու համար ոչ բավարար ռեսուրսը խարխլեց ժողովրդավարական համակարգի արժեբանական հիմքերը: Առաջանցիկ զարգացման տեմպ ունեցող պետություններում հետզհետե գեներացվում է հանրային դժգոհություն՝ պետության կողմից մատուցված ծառայությունների հասանելիության և առհասարակ արդյունավետության շուրջ: Միգրացիոն հոսքերի մեծացման, համաշխարհային կապիտալի ու ֆինանսական հոսքերի քաոտիկ շարժման մեջ առաջարկվում է հանրային կառավարման համակարգի նոր մոդել, որը հիմնվում է բիզնես մենեջմենթի սկզբունքների վրա: Այդ կերպ, ձևավորվում է «**ժամանակակից հանրային մենեջմենթի**» հայեցակարգը կամ պետությունը տնտեսական մոդելով կառավարելու մոտեցումը: Հատկանշական է, որ այդ հայեցակարգի հիմքում ընկած կառավարչական սկզբունքները փոխառվել են կորպորատիվ կառավարման, բիզնես կազմակերպությունների փորձից: Նոր հարացույցի շրջանակներում մենեջմենթի սկզբունքների ուսումնասիրության նպատակը եղել է կազմակերպությունների արդյունավետ գործելու կառուցակարգերի, համագործակցության ձևերի, որոշումների ընդունման ոճերի, առաջնորդության առանձնահատկությունների հետազոտումը և պետական հատվածում դրանց կիրարկման հնարավորությունների գնահատումը: Առաջին նման հետազոտության փորձ է արել Վանդերբիլթի համալսարանի պրոֆեսոր **Ռ.-Դաֆտը**: Համեմատելով պետական և բիզնես կազմակերպությունների կառավարման պրակտիկաները՝ Ռ.Դաֆտը կարողացել է մշակել ընդհանուր սկզբունքներ, որոնք երկուսի դեպքում էլ արդյունավետ են աշխատում: Ըստ այդմ, հանրային ցանկացած կազմակերպության կառուցվածքային միավոր աշխատում է տնտեսական օրենքների, նորարարական տեխնոլոգիաների, կազմակերպական որոշակի մշակույթի շրջանակներում[1]: Իր գաղափարները զարգացնելով «**կազմակերպությունների մասին տեսութ-**

[1] **Daft L.R.** Management, 9th ed., “South-Western Learning”, Vanderbilt, 2010, pp. 52-54

յան» խնդիրների առանցքում, Ռ.Դաֆտը կարևորել է կոորդինացնելու գործառույթը: Պատահական չէ, որ հանրային մենեջմենթի հայեցակարգով առաջ քաշված կառավարման մոտեցումների տիրույթում են զարգացել հանրային (պետական) և մասնավոր գործընկերությունը խթանելու, կազմակերպական մշակույթով համատեղ գործունեության առարկայական միջավայր ստեղծելու, հանրային կառավարման դերակատարների միջև փոխհարաբերությունների նոր որակ հաստատելու և շատ այլ գաղափարներ:

Տնտեսության և կառավարման պետական ու ոչ պետական հատվածներում ընդհանուր մոտեցումների մշակման առումով մեծ ներդրում են ունեցել ամերիկացի հեղինակներ **Թ.Փիթերսն** ու **Ռ.Ուոթերմենը**: Վերջիններս ձևակերպել են **ժամանակակից հանրային մենեջմենթի սկզբունքները**[1]: Հեղինակների համոզմամբ, հանրային ծառայությունները սոցիալական արդարության սկզբունքով մատուցելու համար՝ հանրային (պետական) կազմակերպությունները պետք է գործեն հետևյալ սկզբունքներով. *ա) որոշումներ ընդունել կողմերի հետ խորհրդակցություններ անցկացնելու միջոցով, բ) մատուցվող ծառայությունների վերաբերյալ հետադարձ կապ ապահովելու միջոցով, ինչը նշանակում է «կառավարել մարդուն (հաճախորդին) մոտ լինելու սկզբունքով,, գ) անհատական ու թիմային աշխատանքի բարձր պատասխանատվությունը պայմանավորել համապատասխան գիտակցություն ու արժեհամակարգ ձևավորելու միջոցով, դ) անկախ հանգամանքներից՝ առաքելությանը հավատարիմ լինելու սկզբունքով քաղաքականություն իրականացնելու միջոցով* և այլն[2]: Թ.Փիթերսի և Ռ.Ուոթերմենի մշակած հանրային մենեջմենթի սկզբունքների հիման վրա ավելի ուշ ձևավորվել է պետության կառավարման նոր մոդել, որի հիմքում ցանցային կառավարումն է, պետական և մասնավոր հատվածների համագործակցությունը՝ ի շահ հանրային բարիքի արարման:

Բազմամակարդակ կառավարման բարդ փոխհարաբերությունները, հանրային կառավարման համակարգի դերակատարների ընդլայնմանը զուգընթաց, միանգամայն նորովի արժևորվում են **«ժամանակակից հանրային ղեկավարման»** հայեցակարգում: Դրա հիմնադիր տեսաբաններ **Դ.Օսբորնը և Թ.Գեբլերը** XXI-րդ դարի կառավարումը վերլուծել են **հանրային, մասնավոր և հասարակական կազմակերպությունների** միջև հաղորդակցության ու գործընկերության շրջանակներում[3]: Պետության ներուժը, ըստ հեղինակների, հանրային կառավարման բոլոր դերակատաների ռեսուրսներով ու մրցունակ ինստիտուտներ ստեղծելու միջոցով է դառնում հնարավոր: Հատկանշական է, որ այս հայեցակարգում բառացիորեն վերակառուցվում է կառավարության՝ որպես պետության ռազմավարական տեսլականը կյանքի կոչող սուբյեկտի դերը: Տեղեկատվական հասարակության և գլոբալ շուկայի պայմաններում կառավարության առաքելությունն այլևս պարզ կառավարչական գործառույթներ իրականացնելը չէ: Հանրային (պետական) կառավարման արդյունավետությունը որոշվում է հանրային շահերը պաշտպանելու և դրանք բավարարելու կարողունակություններով: Հիմք ընդունելով

---

[1] **Peters Th. J., Waterman H.R**. In Search of Excellence: Lessons from America's Best-Run Companies, "Harper & Row Publishers", New York, 1982, pp. 25-28.

[2] **Frederickson H.G., Smith B.K., Larimer W. Ch., Licari J.M**. The Public Administration Theory Primer, 2nd ed., "Westview Press", 2012, pp. 227-235.

[3] **Osborn D., Gaebler T.** Reinventing Government: How the Entrepreneurial Spirit is Transforming the Public Sector, "Addison-Wesley", 1992, p. 10.

վերջինը՝ հեղինակներ Դ.Օսբորոնն ու Թ.Գեբլերը մատնանշել են այն կետը, որտեղ պետական կառավարման և հանրային ոլորտի կազմակերպությունների գործողությունները հատվում են: Այդ կետը կոչվում է **հանրային քաղաքականության մշակման գործընթաց**[1]: Հանրային քաղաքականության միջոցով հանրային ոլորտի կազմակերպություններին հաջողվում է առավելագույն արդյունավետությամբ նախագծել, իրականացնել և գնահատել զարգացման ռազմավարություններ՝ գերակա սոցիալական ու տնտեսական խնդիրները լուծելու համար: Ավելին՝ հանրային քաղաքականությունը սոցիալական բարձր պատասխանատվությամբ իրականացնելու հանրային կառավարման բոլոր դերակատարների պարտավորությունը «հանրային ղեկավարման հայեցակարգի» գերակա կանխադրույթն է:

Եզրակացություն

Ընդհանրացնելով հանրային կառավարման երեք հայեցակարգերի էության ուսումնասիրության արդյունքները՝ հանգում ենք այն մտքին, որ արդյունավետ պետական կառավարման, ժողովրդավարության, հանրային բարիքի ձևավորման ու կազմակերպությունների գործառնության սկզբունքների վերաբերյալ պատկերացումները կրում են **իրավիճակային փոփոխություններ**: Այդ փոփոխությունները ոչ այնքան ազգային պետության ներքին ազդակներով, որքան գլոբալ իրողություններով են պայմանավորված: Հանրային կառավարման կայացած համակարգ ունեցող պետությունների առավելությունն այն է, որ դրանք **անցել են բոլոր երեք հայեցակարգային շրջափուլերով**՝ չխորշելով կառավարչական նոր սկզբունքներ ու փոխհարաբերություններ հաստատելու անհրաժեշտ գործողություններից: Հանրային կառավարման հայեցակարգերի համեմատական վերլուծությունն, իր հերթին, թույլ տվեց վերհանել այն **ընդհանուր խնդիրները**, որոնք առնչվում են կառավարման մոտեցումներին, սկզբունքներին և կառուցակարգին: Ուսումնասիրությունից բխող վերջին կարևոր եզրահանգումը թերևս այն է, որ հանրային կառավարման համակարգի կայացումը հնարավոր չէ առանց հայեցակարգային հիմքի: Զարգացման կամ արդիականացման ընկալումը պետք է ունենա հայեցակարգային ձևակերպում, որտեղ հստակ կնախանշվեն հանրային ինստիտուտների կառավարման նպատակները, խնդիրները և ակնկալվող արդյունքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Daft L.R. Management, 9th ed., “South-Western Learning”, Vanderbilt, 2010.
2. Denhard R. Theories of Public Administration, “Antares” publ. house, Yerevan, 2006.
3. Drucker P. F. The Practice of Management, “HarperBusiness”, New York, 2006.
4. Frederickson H.G., Smith B.K., Larimer W. Ch., Licari J.M. The Public Administration Theory Primer, 2nd ed., “Westview Press”, 2012, pp.
5. Handbook of Public Policy Analysis Theory, Politics and Methods, /ed. by F. Fischer, G.J. Miller, M.S. Sidney/, CRC Press “Taylor & Francis Group”, 2007.

[1] Handbook of Public Policy Analysis Theory, Politics and Methods, /ed. by F. Fischer, G.J. Miller, M.S. Sidney/, CRC Press “Taylor & Francis Group”, 2007, p. 15-18.

6. Lawrence J., Thompson F. From Bureaucracy to Hyperarchy in Netecntric and Quick Learningn Organizations: Exploring Future Public Management Practice, Information Age Publishing, Inc., USA, 2007.
7. LeMay M.C. Public Administration: Clashing Values in the Administration of Public Policy, 2nd ed., "Belmont" (CA), 2006, p. 31.
8. Osborn D., Gaebler T. Reinventing Government: How the Entrepreneurial Spirit is Transforming the Public Sector, "Addison-Wesley", 1992.
9. Peters Th. J., Waterman H.R. In Search of Excellence: Lessons from America's Best-Run Companies, "Harper & Row Publishers", New York, 1982.
10. Suvaryan Yu., Mirzoyan V., Hayrapetyan R. Public Administration: Theory and History, "Gitutiun" publ. house, Yerevan, 2014.

РЕЗЮМЕ

Эволюция концептуальных основ государственного управления

Алтунян Катерина

Доцент кафедры Государственного управления
факультета Международных отношений,
Ереванского государственного университета,
кандидат политических наук
Ереван, Армения

Целью данной статьи является изучение основной сущности государственного управления на современном этапе, предпосылок формирования и проблем развития государственной системы. Последнее подразумевает изучение теоретических систем, построенных на концепциях «государственного управления», «государственного менеджмента» и «государственного администрирования». Соответственно, подчеркивая необходимость модернизации системы государственного управления, была предпринята попытка комплексно проанализировать ядро прогрессивной общественно-политической и экономической мысли.

Как известно, государственное управление – это режим демократической системы, который, согласно всеобъемлющему определению, представляет собой совокупность общепринятых правил разработки и реализации политики. Таким образом, для исследования предмета использовались сравнительный метод и анализ концепций современного государственного управления, включая интерпретацию принципов, по которым оно осуществляется, а также институты и логика их функционирования.

Обобщая результаты данного исследования, можно подчеркнуть, что эволюция сущности трех концепций государственного управления, особенно понятия принципы эффективности, демократическое управление, формирования общественного блага, организационные аспекты претерпевают ситуативные изменения. Важно также отметить, что создание системы государственного управления невозможно без концептуальной основы. Восприятие развития или модернизации должно иметь концептуальную формулировку.

Ключевые слова: государственное управление, теория управления, государственный менеджмент, государственное администрирование, принципы управления, государственные услуги, государственная политика, общественные институты, сетевое управление.

SUMMARY

Evolution of Conceptual Basics of Public Administration

Altunyan Katerina

Yerevan State University, Faculty of International Relations,
Associate Professor at the Chair of Public Administration,
Ph.D. in Political Sciences
Yerevan, Armenia

The purpose of this article is to study the nature of the basic concepts of public administration, the prerequisites and the supreme problems of future development. It implies, in particular, the comparative research of theoretical systems built by modern “Public Administration", "Public Management" and "Public Governance" concepts. Accordingly, emphasizing the necessity of modern and effective public administration system, an attempt was made to comprehensively analyze the core of the modernization of progressive social, political and economic thought.

As we know, public administration is a regime of a democratic system, which, according to a comprehensive definition, is a set of publicly accepted rules for policy development and implementation. Thereby research comparative method and analytical tools used within the research helped to formulate the main principles, as well as the institutions and their functions were developed and presented on one basis.

Summing up the results of this research - study it can be emphasized that the evolution of the essence of the three concepts of public administration, especially the aspects of efficiency, democratic governance, the public good and organizational aspects etc. It is also important to note that the creation of a public administration system is impossible without a conceptual basis.

Keywords: public administration, administration theory, public management, public governance, government principles, public service, public policy, public institutions, network management.